ԻՆՉՊԵ՞Ս ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՕՆԼԱՅՆ

Քայլ 1՝ Մո՛ւտք գործեք ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ ԱՓԲԸ-ի կայք՝
https://ingoarmenia.am/

Քայլ 2՝ Վերևի աջ անկյունից ընտրեք առցանց ծառայություններ, կամ ուղղակի անցեք հետևյալ հղմամբ՝
https://online.ingoarmenia.am/

Քայլ 3՝
Ընտրեք հատուցումներ →
հատուցման դիմումներ →
առողջության ապահովագրություն:

Քայլ 4՝ Լրացրեք այն անձի տվյալները, ով դիմել է բժշկի կամ ում համար կատարվել է ծախսը.

1. **անձնագրի սերիան և համարը կամ ID քարտի համարը**
2. **ծննդյան տվյալները (եթե լրացնում եք բջջային հեռախոսով, անհրաժեշտ է սկզբից ընտրել ծննդյան տարեթիվը հետո ամիսը և օրը)**
3. **սոց. քարտի համարը**

Նշված երեք դաշտերը լրացնելուց հետո անհրաժեշտ է սեղմել **փնտրել** կոճակը:

Եթե տվյալներից որևէ մեկը չհամընկնի համակարգում առկա ինֆորմացիայի հետ, Դուք էկրանին կտեսնեք հաղորդագրություն. խնդրում ենք հետևել այդ հաղորդագրությանը: Եթե նշված տվյալները համընկնեն համակարգում առկա տվյալների հետ, Դուք կանցնեք դիմումի լրացման հաջորդ քայլին:



Քայլ 5՝ Էկրանին ապահովագրված անձի տվյալներ դաշտում կհայտնվի այն անձի տվյալները ում համար լրացվում է դիմումը: Եթե տվյալները ճիշտ են, սեղմե՛ք հաջորդ կոճակը: Այն դեպքում, եթե տվյալները սխալ են զանգահարեք 010 59 21 21 հեռախոսահամարին:



Քայլ 6՝ Անհրաժեշտ է լրացնել.

1. **դեպքի ամսաթիվը, որը հանդիսանում է բժշկի դիմելու ամսաթիվը կամ ՀԴՄ կտրոններով ներկայացվող կատարված առաջին ծախսի ամսաթիվը,**
2. **ներկայացվող գումարի չափը և արժույթը:**

Առկա պայմանագրեր հատվածից անհրաժեշտ է ընտրել այն պայմանագիրը, որի ընթացքում տեղի է ունեցել դեպքը: Ընտրությունը կատարվում է՝ տվյալ պայմանագրի համարի վրա սեղմելով, որից հետո անհրաժեշտ է սեղմել **հաջորդ** կոճակը:



Քայլ 7՝ Անհրաժեշտ է լրացնել այն մարդու տվյալները, ով ստանալու է փոխհատուցումը: Օրինակ, եթե ծնողներից մեկը լրացնում է դիմում երեխայի համար և գումարը պետք է փոխանցվի ծնողներից մեկի հաշվեհամարին, ապա անհրաժեշտ է նշել այլ անձ և լրացնել այն անձի տվյալները, ով ստանալու է հատուցումը:

Քայլ 8՝ Անհրաժեշտ է կցել այն փաստաթղթերը, որոնք առկա են Ձեզ մոտ, ըստ պատուհանում առկա անհրաժեշտության և սեղմել հաջորդ կոճակը:



Քայլ 9՝ Ամփոփում դաշտում անհրաժեշտ է լրացնել.

1. **բջջային հեռախոսահամար,**
2. **էլ. փոստի հասցեն,**
3. **հաստատել էլ. փոստի հասցեն,**
4. **հեռախոսահամար դաշտը լրացնելը պարտադիր չէ,**
5. **նշել ծանոթացել եմ և համաձայն եմ պայմաններին թռչնակը,**



Սեղմել ուղարկել կոճակը: Եթե ամեն ինչ ճիշտ է ընթացել Ձեր էլ. փոստի հասցեին կգա էլ. հաղորդագրություն, առ այն, որ Ձեր դիմումն ընդունված է: Դիմումն ուղարկելուց հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում, կստանաք SMS հաղորդագրություն, որտեղ նշված կլինի հայտի համարը, որին կարող եք հետևել օնլայն: